ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան «07» մայիսի 2025 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 136-Ա/1

ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐԱԶԻՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ/ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի մայիսի 6-ի N 1033-Ա/2 հրամանը՝ գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթը պատշաճ կազմակերպելու համար՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնին (պետ՝ Աստղիկ Մելիք-Քարամյան)՝ ապահովել մրցույթի հրավերի փաթեթի և արդյունքների տեղադրումը Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի փորձաքննության և վերլուծությունների վարչությանը (պետ՝ Արսեն Հակոբյան)՝

1) ապահովել մրցույթի հայտերի առցանց համակարգով ընդունումը,

2) կազմակերպել մրցույթի հայտերը և հաշվետվությունները գնահատող հանձնաժողովի աշխատանքը:

3. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ծրագրերի իրականացման վարչությանը (պետ՝ Լուսինե Գրիգորյան)՝

1) իրականացնել մրցույթի հայտատուների համար խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի թղթային տարբերակների ընդունումը:

4. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի բյուջետավորման և գնումների բաժնին (պետ՝ Սերգեյ Սանթրոսյան)՝ կազմակերպել գիտական սարքերի/սարքավորումների գնման գործընթացը:

5. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ ապահովել մրցույթի արդյունքներով գնման ենթակա գիտական սարքերի/սարքավորումների գնման համար ֆինանսական միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

6. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալ Կարեն Ղարիբյանին՝ կազմակերպել մրցույթի շահառու կազմակերպությունների հետ սարքի/սարքավորման նվիրաբերության պայմանագրերի կնքումը:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Ֆարմանյանին:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ